ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«30» 09 2019թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000078

Ձեռնարկողը՝ ***«Գեոքարտնախագիծ» ՍՊԸ***
Ք. Երևան, Ռուբինյանց 1ա

Գործունեությունը՝ ***Պտղնի համայնքի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Դռնոյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

թիվ ԲՓ 000078

<<30>> 09 2019թ.

Կոտայքի մարզի Պտղնի համայնքի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	<<Գեոքարտնախագիծ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Հիմնադրութային փաստաթուղթ. - ազդեցության ռազմավարական գնահատման (ՌԷԳ) հաշվետվություն, - ծրագրային փաստաթուղթ
Տեղադրման վայրը՝	Կոտայքի մարզի Պտղնի համայնք (բնակավայր)

Կոտայքի մարզի Պտղնի բնակավայրի պարզեցված գլխավոր հատակագիծը մշակվել է Պտղնի համայնքապետարանի պատվերով՝ <<Գեոքարտնախագիծ>> ՍՊԸ-ի կողմից:

Ծրագրի նպատակն է ստեղծել համայնքի բնակիչների համար ճարտարապետա-քաղաքաշինական բարենպաստ կենսամիջավայր, հստակեցնել բնակավայրի հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները:

Գնահատման հաշվետվության համար հիմք է ընդունվել համայնքի գոյություն ունեցող իրավիճակի և հեռանկարային զարգացման ծրագրի համեմատական վերլուծությունը, հողային ռեսուրսների փոփոխությունների իրականացման հետևանքով ազդեցությունների, նախատեսվող միջոցառումների համադրումը և գնահատումը:

Պտղնի համայնքը գտնվում է Կոտայքի մարզի հարավային մասում՝ Հրազդան գետի ձախ ափին, ծովի մակարդակից 1250-1380 մ բարձրությունների վրա: Համայնքը սահմանակից է Կոտայքի մարզի Գետամեջ, Բալահովիտ, Վերին Պտղնի համայնքներին, գտնվում է Երևան քաղաքից 4-5կմ հեռավորության վրա: Կլիման չոր ցամաքային է, չափավոր ցուրտ ձմեռով և տաք ամառով: Տարեկան տեղումները կազմում են 400-500 մմ: Տարածաշրջանին բնորոշ են լեռնա-դաշտային քամիները:

Ռելիեֆը հիմնականում ունի միջին կտրտվածություն: Տարածքի երկրաբանական կառուցվածքին բնորոշ են անդեզիտա-բազալտները, կավավազները, մանրախճային

գրունտը՝ մեծաբեկորների պարունակությամբ: Բնական լանդշաֆտը կիսանապատային է, բայց ոռոգման գոտում գտնվելու շնորհիվ վերածվել է ոռոգելի լանդշաֆտի: Ըստ ՀՀ Գիտությունների ակադեմիայի երկրաբանական ինստիտուտի նախկին տարիներին կատարված հիդրոերկրաբանական հետազոտությունների՝ գրունտային ջրերը գտնվում են 100 մ-ից խորը հորիզոններում: Համաձայն սեյսմիկ միկրոշրջանացման քարտեզագրական տվյալների՝ Պտղնի համայնքի տարածքն համապատասխանում է 0.368g հորիզոնական արագացման արժեքին:

Բարձրադիր մասերում տարածված են բաց շագանակագույն, ցածրադիր մասերում՝ շագանակագույն և գորշ հողերը: Հողի բերրի շերտի հզորությունը տատանվում է 20-80սմ: Պտղնի համայնքի վարչական տարածաշրջանում չկան չօտագործվող հողահանդակներ, արոտավայրեր ու խոտհարքներ:

Համայնքի վարչական տարածքով է հոսում 141 կմ երկարություն ունեցող Հրազդան գետը, որի ջրերն օգտագործվում են ոռոգման նպատակով:

Բուսական աշխարհին բնորոշ է միջին բարձրության լեռնային չոր տափաստանային գոտու բուսականությունը՝ հացազգիները (անապատասեզը, ցորնուկը, այծակնը, դաշտավլուկը), առնասպարը, ճռճռուկը, եղջրագլխիկը, ճարճատուկը, կակաչը, սագասոխուկը, պապլորը, աստղաշուշանը հոտավետ օշինդրը, լերդախոտը, բորբոսատեսուկը, դաշտավլուկը և այլն: Տարածաշրջանում կան նաև դեղաբույսեր և համեմունքային բույսեր:

Կենդանական աշխարհին բնորոշ են՝ սպիտակամկնիկը աղվեսը, գերմանամուկը, դաշտամուկը, կաքավը և այլն: Թռչնատեսակներից են մոխրագույն ագռավը, գյուղական ծիծեռնակը, ճնճղուկը և այլն: Տարածաշրջանում հանդիպում են նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված անհետացող բուսատեսակներ և կենդանատեսակներ: Համայնքի վարչական սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:

Բնակավայրում առկա են՝ դպրոց, բուժական ամբուլատորիա, ժամանցային համալիրներ: Բնակավայրը գազիֆիկացված է, ջերմամատակարարումն իրականացվում է հիմնականում անհատական գազային վառարաններով: Աղմուկի և օդի աղտոտվածության հիմնական աղբյուր է հանդիսանում ավտոտրանսպորտը: Համաձայն գնահատման հաշվետվության, տարածքն ընդհանուր աղտոտվածության գնահատումներով գտնվում է բարենպաստ գոտում: Բնակավայրի ջրամատակարարումն իրականացվում է գոյություն ունեցող բաշխիչ ցանցի՝ <<Վեոլիա Ջուր>> ՓԲԸ-ի միջոցով: Բնակավայրում բացակայում են ՕԿՋ-ները:

Բնակչության ջրամատակարաման ջրապահանջը ներկայումս կազմում է 355.2 մ^3/օր, հեռանկարում բնակչության թվաքանականի աճով պայմանավորված կազմելու է 390.6 մ^3/օր: Հոսակորուստների կրճատման շնորհիվ համայնքի ընդհանուր ջրապահանջը (703.29 մ^3/օր) հեռանկարում կրճատվելու է (670.27 մ^3/օր):

Համայնքը կոյուղացված չէ, կեղտաջրերը հեռացվում են բակային ներծծման հորերով, որը լուրջ վտանգ է ներկայացնում շրջակա միջավայրի և բնակավայրի սանիտարական վիճակի համար: Բացակայում է նաև հեղեղատար կոյուղի: Այժմ համայնքի կեղտաջրերի հաշվարկային ելքը կազմում է 421,97 մ ^{3}/օր, հեռանկարում՝ 464,03 մ^3/օր:

ՀՀ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԿԱՆԽԱՐԳԻՉ ԿԵՆՏՐՈՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS
ՀՀ ԵՐԵՎԱՆ * РА ЕРЕВАН

Համայնքի աղբը տեղափոխվում է Ջրվեժի աղբավայր՝ Պտղնի համայնքի և «Անկոլո» ՍՊԸ-ի միջև կնքված աղբահանության պայմանագրին համաձայն: 2020թ.-ից աղբահանությունը կատարվելու է «Կոտայքի կոշտ կենցաղային թափոնների կառավարում» ծրագրի շրջանակներում: Գոյություն ունեցող՝ 4,87 հա մակերեսով գերեզմանատան սանիտարապաշտպանիչ գոտին ապահովված չէ և ենթակա է փակման:

Համայնքի բնակչությունը կազմում է 1776 մարդ, հեռանկարում՝ 1953 մարդ:

2011թ.-ին դրական փորձաքննական եզրակացություն ստացած Պտղնիի գլխավոր հատակագծում համայնքի տարածքը կազմել է 808,0հա: 2012թ. կադաստրի պետական կոմիտեի կողմից կատարվել են համայնքային հողատարածքի ճշգրտումներ և փոփոխման արդյունքում այժմ այն կազմում է 799.45 հա: Հաշվետվությունում ներառվել է 2011թ. փորձաքննական եզրակացությամբ՝ հողերի և նախագծային առաջադրանքով ամրագրված հողատեսքերի փոփոխությունների վերլուծությունը: Պտղնիի զարգացման հեռանկարային լուծումները կազմվել են գոյություն ունեցող արխիվային նյութերի, համայնքի զարգացման ուղղվածության, հատակագծային լուծումների, տարածքի ինժեներա-երկրաբանական պայմանների, տեխնիկատնտեսական ցուցանիշների ուսումնասիրությունների, վերլուծությունների, հատակագծի նախագծա-տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն հաշվետվության հեռանկարում նախատեսվող գործունեությունների իրականացման ընդհանուր մակերեսը կազմելու է 3.6 կմ^2:

Համայնքը զբաղեցնում է 799.45հա, որի հիմնական մասը կազմում են գյուղատնտեսական նշանակության (484.38 հա), բնակավայրի (265.56 հա) հողերը:

Հեռանկարային զարգացման շրջանակներում նախատեսվում է հողային ֆոնդի՝ նպատակային և գործառնական նշանակության փոփոխություններ: Կատարվող հողատեսքային փոփոխությունների արդյունքում հողային ռեսուրսները՝ ներկա վիճակում և հեռանկարում ունենալու են հետևյալ բաշխվածությունը.

- գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 484.38 հա, հեռանկարում կազմելու է 464.35 հա, որից վարելահողը՝ 75.08 հա, հեռանկարում՝ 73.17 հա, բազմամյա տնկարկները՝ 2.89 հա, հեռանկարում՝ 6.76 հա, արոտ՝ 300.75 հա, հեռանկարում՝ 282.47 հա, խոտհարք՝ 105.66, հեռանկարում՝ 101.95 հա,

- բնակավայրի հողեր՝ 265.56հա, հեռանկարում՝ 272.69 հա, որից բնակելի կառուցապատման՝ 196.28հա, հեռանկարում՝ 200,806 հասարակական կառուցապատման՝ 5.23 հա, հեռանկարում՝ 7.945 հա, ընդհանուր օգտագործման՝ 29.69հա, հեռանկարում՝ 29,619 հա, այլ հողեր՝ 34.36 հա, հեռանկարում՝ 34.32 հա,

- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 11.03 հա, հեռանկարում՝ 20.05 հա, որից գյուղատնտեսական արտադրության հողեր՝ 10.81հա, հեռանկարում՝ 19.83 հա, պահեստարանների հողեր՝ 0.10հա, հեռանկարում չի փոփոխվելու, արդյունաբերության՝ 0.12 հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքի՝ 14.07հա, հեռանկարում՝ 15.25 հա, այդ թվում՝ էներգետիկայի՝ 6.91 հա,հեռանկարում չի փոփոխվելու, տրանսպորտի՝ 7.16, հեռանկարում չի փոփոխվելու, կոմունալ ենթակառուցվածքի՝ հեռանկարում ավելանալու է 1.18 հա-ով,

- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 16.35.հա, (պատմության և մշակույթի հողեր են), հեռանկարում չի փոփոխվելու,

- հատուկ նշանակության հողեր՝ 0.34 հա, հեռանկարում չի փոփոխվելու,

- անտառային հողեր՝ 1.34 հա, հեռանկարում՝ 5.48 հա,

- ջրային հողեր՝ 6.39հա, հեռանկարում՝ 4.95 հա, այդ թվում լճեր՝ 1.49հա, հեռանկարում՝ 0.05հա, գետեր՝ 4.61հա, հեռանկարում չի փոփոխվելու, հիդրոտեխնիկական՝ 0.29 հա, հեռանկարում չի փոփոխվելու:

Հողատեսքերի նպատակային և գործառնական նշանակության ընդհանուր փոփոխությունները կազմելու են 27.791 հա: Կատարվելու են վարելահողերի, արոտավայրերի, այլ հողատեսքերի, բնակելի կառուցապատման, հասարակական կառուցապատման և այլ հողատեսքերի փոփոխություններ: Չեն փոփոխվելու հատուկ պահպանվող՝ պատմական և մշակույթի, հատուկ նշանակության հողերը: Հեռանկարում այլ հողերի հաշվին ավելանալու են անտառային տարածքները՝ 4.14 հա-ով: Ջրային հողերի տարածքները ճշգրտվել են, հաշվի առնելով գոյություն ունեցող լճերի փաստացի սահմանները:

Համաձայն ռազմավարական գնահատման հաշվետվության, համայնքում ընդհանուր օգտագործման կանաչ տարածքներ (զբոսայգի, պուրակ և այլն) չկան և հեռանկարում չեն նախատեսվում, համայնքային սեփականություն հանդիսացող ազատ հողատարածքների բացակայության պատճառով: Նոր նախատեսվող անտառների ավելացման հաշվին ավելանալու են կանաչապատ տարածքները: Հեռանկարային զարգացման հիմնական ուղղությունները լինելու են անասնապահությունը և այգեգործությունը: Համայնքի հիմնախնդիրներից է համարվում հոսակորուստների կրճատումը, համայնքի խմելու և ոռոգման ջրով ապահովումը:

Հողատեսքերի փոփոխության արդյունքում նախատեսվում է.

- ջրային ներքին ցանցի, ՕԿՋ-ի, պոմպակայանի կառուցում,

- բնակավայրի հարավ-արևմտյան հատվածում՝ մաքրման կայանի կառուցում՝ կենցաղային կոյուղաջրերը հեռացնելու նպատակով,

- կոյուղու ցանցերի, կենցաղային կոյուղաջրերի և սելավային ջրերի մաքրման կայանների, սելավային ջրերի բակային և փողոցային ցանցերի կառուցում,

- համայնքի տարածքով անցնող հեղեղատարի որոշ հատվածներում ափապաշտպան կառույցների կառուցում, սելավատարի հունի խորացում,

- 41,5 կմ ընդհանուր երկարության կոյուղատարի կառուցում,

- նոր թաղամասերում գազատարի կառուցում,

- բակային և փողոցային ցանցի բարեկարգում և կառուցում,

Նախատեսվում է նաև համայնքի ավագանու որոշմամբ՝ բնակավայրից 1300մ հեռավորության վրա 2,0 հա ժամանակավոր աղբավայրի կառուցում: Հեռանկարում նախատեսվում է գյուղի արևմտյան մասում՝ համայնքից 1 կմ հեռավորության վրա 3,0 հա նոր գերեզմանոցի կառուցում և փակման ենթակա գերեզմանոցի ցանկապատում:

Համաձայն հաշվետվության ճշգրտվել են համայնքի հուշարձանների, լանդշաֆտի պահպանության գոտիները, դրանց օգտագործման, կառուցապատման և սահմանափակման ռեժիմները: Կազմվել է նաև համայնքի գոտևորման նախագիծը, սահմանվել բնակավայրի

առանձին գոտիների բաժանումը, հողօգտագործման և կառուցապատման թույլատրելի օգտագործման նորմերին և չափորոշիչներին համապատասխան: Հաշվետվությունում ներառված են այլընտրանքային տարերակի (զրոյական) վերլուծությունը, ներկայացված տարբերակի հիմնավորումը:

Համաձայն գնահատման հաշվետվության կատարվող գործողությունների ենթակա տարածքում ազդեցությունները կապված են լինելու մթնոլորտային օդի, մակերևութային և ստորգետնյա ջրերի աղտոտվածության, թափոնների կառավարման, հողային ռեսուրսների հավանական աղտոտման հետ:

Գլխավոր հատակագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների իրականացումը շրջակա միջավայրի վրա ունենալու են ազդեցության ցածր ռիսկեր: Հնարավոր բացասական ազդեցությունները լինելու են տեղայնացված, կրելով ժամանակավոր բնույթ: Նախատեսվող փոփոխությունների արդյունքում (ջրամատակարարում, ջրահեռացում, ճամնապարհների բարեկարգում) կբարելավվի բնակչության կենցաղային, սանիտարահիգիենիկ և առողջապահական պայմանները: Նախատեսված աշխատանքների կատարման տարածքում Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները և կենդանատեսակները բացակայում են: Բնության հուշարձանների և հատուկ պահպանվող տարածքներում որևէ աշխատանք չի նախատեսվում:

Շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով հաշվետվությունում նախատեսվում է օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, լանդշաֆտի վերականգնմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր և մոնիթորինգ.

- փոշենստեցման նպատակով ճանապարհների ջրցան, ճանապարհային ծածկի բարելավում,
- թափոնների, շին աղբի տեղափոխում ծածկված բեռնատարներով,
- գործողությունների կատարման արդյունքում առաջացող հողի բերրի շերտի պահպանում և նպատակային օգտագործում,
- աշխատողների աշխատանքի անվտանգության ապահովում,
- հակաէրոզիոն, ագրոմելիորատիվ, հիդրոտեխնիկական, հակահեղեղային, հակասողանքային գործողությունների կատարում՝ հողային ծածկույթի պահպանման նպատակով,
- ոռոգման համակարգի բարելավում և բարեփոխում, ջրային ավազանների աղտոտման կանխարգելում,
- թափոնների կառավարման բարելավում՝ կոշտ կենցաղային թափոններով աղտոտված տարածքների մաքրում, չթույլատրված աղբավայրերի բացառում,
- խախտված լանդշաֆտով հողակտորների և տարածքների մաքրում, վերականգնում, կանաչապատում,
- բոլոր տեսակի հասարակական կառույցների տարածքների բարեկարգում և կանաչապատում,

- ավտոմոբիլային տրանսպորտի զինում՝ արտանետվող գազերի չեզոքացուցիչներով և այլն:

Պատճառաբանական եզրահանգումներ. համաձայն ռազմավարական գնահատման հաշվետվության համայնքի հեռանկարային զարգացումը՝ տարածքի բնական լանդշաֆտի, կենսաբազմազանության և շրջակա միջավայրի բաղադրիչների վրա կունենա նվազագույն ազդեցություն, կկրի ժամանակավոր բնույթ, քանի որ նախատեսվող նախագծային լուծումները կատարվելու են գոյություն ունեցող կառույցների սահմաններում, շրջանցելով ծառապատ հատվածները: Հիմնադրութային փաստաթղթի իրականացումը նպաստելու է համայնքի կայուն զարգացմանը և բնակչության սոցիալ-տնտեսական, կենցաղային պայմանների բարելավմանը:

Ռազմավարկան գնահատման հաշվետվության փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, կրթության, գիտության, սպորտի և մշակույթի, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունները, որոնց կարծիքների հիման վրա հաշվետվությունը լրամշակվել է: Օրենսդրությամբ սահմանված կարգով Պտղնի համայնքում իրականացվել են հանրային քննարկումներ, որի ընթացքում հանրությունը դրական է արտահայտվել:

Փորձաքննական պահանջներ

- Հիմնադրութային փաստաթղթի դրույթների իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել մշտադիտարկման (մոնիթորինգ) կատարումը, հետնախագծային վերլուծության ծրագրի կազմումը:
- Համայնքի հեռանկարային կառուցապատման ընթացքում անհրաժեշտ է պահպանել նախագծով նախատեսված հեռանկարային լուծումները՝ բացառելով անտառային և հատուկ նշանակության հողերի նպատակային նշանակության փոփոխությունները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Գեոքարտնախագիծ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված Կոտայքի մարզի Պտղնի համայնքի գլխավոր հատակագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության ռազմավարական գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխավոր մասնագետ Թ. Նուրիջանյան